ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՄԲԻՈՆ-ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
(ուսումնական առարկայի անվանումը)

Մասնագիտություն/ուղղություն՝ «Երաժշտական կրթություն» (դասիչ՝ 011401.13.6)
Որակավորումը՝ Մանկավարժության բակալավր
Ֆակուլտետ՝ Հասարակական գիտությունների
Ուսուցման ձև՝ Առկա (2-րդ կիսամյակ)

Հաստատված է ամբիոնի նիստում
(կայացած՝ 06.02, արձ. թիվ 10)
Ամբիոնի վարիչ՝ / / Ա. Բարսեղյան

Հաստատված է Հասարակական գիտությունների
Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում
(կայացած՝ 25.01.24 արձ.թիվ 9)
Դեկան՝ / / Հ. Պապոյան

Կազմող(ներ)՝ / / Հ. Հակոբյան (դոցենտ)
/ / Ս. Հարությունյան (պրոֆեսոր)
/ / Ն. Պապանյան (ասիստենտ)

ՎԱՆԱՁՈՐ
2024թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. **Պրակտիկայի նպատակը՝**

Որակավորմամբ պահանջվող մասնագետի կայացման առհավատչյան մասնագիտական աշխատանքում անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացումն է, մասնագիտական անհրաժեշտ կոմպետենցիաների ձևավորումը: Որպես հիմք հանդիսանում են ծանոթացումը տարբեր մշակույթի կենտրոնների, քաղաքային և մարզային ստեղծագործական կոլեկտիվների գործունեությանը:

2. **Պրակտիկայի խնդիրները՝**

- Ուսումնասիրել ստեղծագործական կոլեկտիվների աշխատանքային գործունեությունը, ղեկավարման համակարգը, գործունեության պայմանները և առանձնահատկությունները,
- Ուսումնասիրել ստեղծագործական կոլեկտիվների աշխատանքային ծրագրերը և ձևավորել գործնական կարողություններ, որոնք թույլ կտան ինքնուրույն կազմել ծրագրեր և կատարել տարբեր մեթոդական աշխատանքներ,
- Ուսանող-պրակտիկանտի մոտ ձևավորել հետաքրքրություններ, ակտիվ և ստեղծագործական մոտեցումներ ստեղծագործական կոլեկտիվի անդամի աշխատանքի նկատմամբ:

3. **Պրակտիկայի հաստատությունը, վայրը՝**

- «Վանաձորի քաղաքապետարանի կամերային նվագախումբ» (Արվեստի քոլեջի փոքր դահլիճ),
- Վանաձորի քաղաքապետարանի «Հորովել» երգի-պարի անսամբլ (Վանաձորի Շ. Ազնավուրի անվան մշակույթի պալատ),
- «Վանաձորի քաղաքապետարանի կամերային երգչախումբ» (Վանաձորի Շ. Ազնավուրի անվան մշակույթի պալատ),
- ՎՊՀ-ի «ԲԻԱՅՆԱ» երգչախումբ:

4. **Պրակտիկայի ընթացակարգը**

Հասարակական գիտությունների ֆակուլտետի «Երաժշտական կրթություն» մասնագիտության ուսումնական պրակտիկայի անցկացման ժամանակացույցն ու ընթացակարգն է.

Առկա ուսուցման համակարգ՝

Հ/Հ	Կուրս	Կիսամյակ	Տևողությունը	Ժամ	Կրեդիտ
1	1-ին	2-րդ	2 շաբաթ	60 ժամ	3
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 60 ժամ					

5. **Պրակտիկայի ղեկավարների (այդ թվում պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից, ղեկավարի) պարտականությունները, գործառույթները, գործառույթների նկարագրությունը.**
   - Ներկայացնել ուսումնական գործընթացը,
   - Հետևել պրակտիկանտների մասնակցությանը տարբեր ստեղծագործական կոլեկտիվների փորձերին,
   - Ծրագրերի ուսումնասիրման աշխատանքները,
   - Ներկայացնել հաշվետվություն և գնահատել:

6. **Պրակտիկանտի պարտականություններն ու իրավունքները.**
   - Ծանոթանալ ստեղծագործական կոլեկտիվների գործընթացներին,
   - Մասնակցել փորձերին,
   - Կատարած աշխատանքների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություն:

7. **Պրակտիկայի հաշվետու փաստաթղթերը՝** պրակտիկայի վերջում ներկայացնում են հաշվետվություն:

8. **Պրակտիկայի գնահատումը՝** պրակտիկան գնահատվում է 100 միավորային սանդղակով:

Պրակտիկայի գնահատումը իրականացվող կատարած աշխատանքներին

Համապատասխան 100 միավոր

Հաճախելիություն	20
Գործնական տեսական գիտելիքների կիրառման կարողություններ	30
Վերլուծական հմտություններ	15
Խոսքի կուլտուրա	15
Պաշտպանություն	20